«ՀԱԶԱՐԱՇԵՆ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«HAZARASHEN»
COMPANY
LIMITED

Сканировано с CamScanner

Պայմանագիր՝ « N ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/24-1»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

Մասիս համայնքի մանկապարտեզների կառուցում, հիմնանորոգում և բարեկարգում

Օբյեկտ՝ Մասիս համայնքի գ.Նոր Խարբերդում մանկապարտեզի կառուցում
Պատվիրատու՝ Արարատի մարզ, Մասիսի համայնքապետարան:

ՀԱՏՈՐ 4. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

«Հազարաշեն» ՍՊԸ տնօրեն — Ռ. Իգիթյան

ՆԳՃ — Ռ.Հարությունյան

Երևան 2022 թ

Մասիս համայնքի մանկապարտեզների կառուցում, հիմնանորոգում և բարեկարգում

Պայմանագիր՝ « N ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/24-1»

Օբյեկտ՝ Մասիս համայնքի գ. Նոր Խարբերդում մանկապարտեզի կառուցում

Նախագծի կազմը

Հատոր N	Նշանակում	Անվանում	Ծանոթագրություն
Հ0	ԵՏ	Ելակետային տվյալներ	
Հ1	Ճ	Ճարտարապետական մաս	
Հ2	ԿԼ	Կոնստրուկտորական մաս	
Հ3	ԷՏ, ՕՋ, ՋԿ	Ինժեներական մասեր	
Հ4	ՇԿՆ	Շինարարության կազմակերպման նախագիծ	
Հ5		Նախահաշվային փաստաթղթեր	

Հ/Հ	ԹԵՐԹԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԹԵՐԹ
	ՀՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ	
1	ԲԱՑԱՏՐԱԳԻՐ	
2	ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՀԱՆՋԻ ԳՐԱՖԻԿ	ՇԿՆ-1
3	ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԳՐԱՖԻԿ ՏՈԿՈՍՆԵՐՈՎ	ՇԿՆ-2
4	ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ (ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ)	ՇԿՆ-3
5	ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑՑ	ՇԿՆ-4

Բացատրագիր

Տվյալ աշխատանքների կազմակերպման նախագիծը մշակված է ՀՀ Մասիսհամայնքի գ.Նոր Խարբերդում մանկապարտեզի կառուցման աշխատանքների համար, որը գտնվում է 9 բալ սեյսմիկ գոտում:

ՇԿՆ-ն մշակված է՝
ՇՆևԿ 3.01.01-85 «Շինարարության արտադրության կազմակերպում»,
ՇՆևԿ 1.04.03-85 « Շինարարության տևողության նորմաներ»,
ձեռնարկներին համապատասխան:

1. Նախապատրաստական փուլ, որի ընթացքում ծրագրվում է՝
*Շինարարական հրապարակի ժամանակավոր պարսպապատման իրականացում:
*Ժամանակավոր շինությունների տեղադրում,որոնք նախատեսված են ապահովելու շինարարության սանիտարա-կենցաղային, պահեստային և արտադրական կարիքները:
* Մեխանիզմների.ամբարձիչ-տրանսպորտային միջոցների և գործիքների առաքում :
* Տարածքի լուսավորման ապահովում:
2. Կառուցման աշխատանքների իրականացման փուլ:

Մասիս համայնքի մանկապարտեզների կառուցում, հիմնանորոգում և բարեկարգում				Պատվեր «ԱՄՄՀ-ԳՀՄՁԲ-22/24-1»		
Հասցե՝ ք. Մասիսի գ.Նոր Խարբերդում մանկապարտեզի կառուցում				Փուլ	Թերթ	Թերթեր
			Շինարարության կազմակերպման նախագիծ (ՇԿՆ)	ԱՆ	ՇԿՆ -1	5
ԿԱՏԱՐՈՂ	Հարությունյան		ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱԳԻՐ		«ՀԱՋԱՐԱՇԵՆ» ՍՊԸ	

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Նպատակները և աշխատանքների համառոտ նկարագիրը

Սույն նախագիծը մշակվել է համաձայն Մասիսի համայնքապետարանի և «Հազարաշեն» ՍՊԸ միջև 24.06.2022թ. կնքված ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/24-1 ծառայությունների մատուցման պայմանագրի:

1.1 Նպատակ

Շինարարական աշխատանքների նպատակն է՝ Մասիս համայնքի գ.Նոր Խարբերդում 7 փողոց 5/1 հողամաս հասցեում մանկապարտեզի կառուցում:

1.2 Աշխատանքի համառոտ նկարագիրը

Սույն պայմանագրի համաձայն Կապալառուն պետք է իրականացնի երկհարկանի նոր շինության կառուցում :

2. Շինհրապարակի գտնվելու վայրը

Շինհրապարակի տարածքը գտնվում է Արարատի մարզի Մասիս համայնքի գ.Նոր Խարբերդ 7 փողոց թիվ 5/1 հողամաս հասցեում:

Ռելիեֆի հարթ, բացարձակ նիշերը տատանվում են 849 մետրի սահմաններում:

Մերջատար ճանապարհներն /ճանապարհային մոտեցումները/ ասֆալտապատ են:

3. Կլիման շինարարության տեղանքում

Ուսումնասիրվող գոտին համաձայն «Շինարարական կլիմայաբանության» (ՀՀՇՆ II-7.01-2011)-ի գտնվում է «տաք կլիմայական շրջանում: Շրջանը ունի ցուրտ ձմեռով և շոգ ամառով, չոր, խիստ ցամաքային կլիմա: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +43°C (Արտաշատ կայան): Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմում է -29°C (Արտաշատ կայան): Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 231մմ, գերակշռում են 3.0մ/վրկ արագություն, հյուսիսային և հյուսիս-արևմտյան ուղղության քամիները: 25 տարվա ընթացքում հնարավոր են 21մ/վրկ ուժգնության քամիներ, 50 տարվա մեջ 24մ/վրկ ուժգնության քամիներ: Քամու արագության ճնշումը՝ 35կգ/մ²: Ձյան ծածկույթի հաստությունը հասնում է 40սմ, իսկ ձյան բեռնվածքի ճնշումը՝ 50կգու/մ²: Բևահողի սառչելու առավելագույն խորությունը 50 սմ է:

Օդի ջերմաստիճան

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների.°C												Տարվա միջին ջերմաստիճան °C	Բացարձակ նվազագույն °C	Բացարձակ առավելագույն °C
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
-3,7	-1,3	5,9	13,1	17,5	22,2	26,3	25,8	20,7	13,3	5,9	0,2	12,1	-29	43

Օդի հարաբերական խոնավությունը

Օդի հարաբերական խոնավությունը, %														
ըստ ամիսների												Միջին տարեկան,%	Միջին ամսական ժամը 15-ին	
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենացուրտ ամսվա %	ամենաշոգ ամսվա, %
81	76	64	57	58	50	47	46	50	63	74	82	62	67	30

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Տեղումների քանակը, մմ — միջին ամսական օրական առավելագույն												Տարեկան	Ձնածածկույթ		
ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածած կույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
25 18	21 24	36 34	39 30	42 20	19 24	12 21	9 14	10 22	25 33	25 23	23 16	231 34	46	41	113

Քամի

Ամիսներ	Կրկնելիությունը ըստ ուղղությունների, % — Միջին արագությունը, մ/վ								Անհողմությունների կրկնելիությունը,%	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիների (≥15մ/վ) օրերի քանակը			
	Հյուսիսային	Հյուսիս-Արևելյան	Արևելյան	Հարավ-Արևելյան	Հարավ	Հարավ-Արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-Արևմտյան					20	50	100
I	14	22	8	9	15	13	12	7	66	0,8	2.1	46	21	24	23
	2,2	2,8	2,3	2.6	2,4	2,2	2.7	2.4							
IV	11	25	10	13	17	10	9	5	21	2.7					
	3,5	3,7	3,1	3,8	3,2	3.5	4,2	3,3							
VII	17	31	8	11	16	8	5	11	16	3,8					
	6,4	6,5	3,1	2,9	2,7	2,8	3	3,5							
X	13	27	10	12	17	9	7	5	41	1,6					
	2,9	3,2	2,6	2,7	2,5	2,6	3,2	2,7							

Արևափայլի փևողությունը 2471 ժամ/տարի, անարև օրերի քանակը՝ 43:

4.Շրջանի գեոմորֆոլոգիան

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանը տեղադրված է ճակատակումային Արարատյան հարթավայրի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ-արևելք, Արաքս և Վեդի գետերի կողմը:

5. Շրջանի երկրաբանական բնութագիրը

Ըստ ֆոնդային նյութերի և տարածաշրջանի մանրամասն տեղազննման, Մասիս համայնքում երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են հետևյալ շերտերը՝ Հողաբուսական շերտ, կավ, ավազակավ՝ շագանակագույն, գորշավուն, տեղ-տեղ կանաչավուն, կիսապինդ, փափուկ պլաստրիկ առանձին դեպքերում ծիգ պլաստրիկ, փղմացած, ջրհագեցած, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0,3-30մ:

6.Շրջանի հիդրոլոգիական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանը ջրառատ է: Առկա են ինչպես վերնաջրերի, այնպես էլ խորը տեղադրում ունեցող ճնշումային ջրերի հորիզոններ: Սուորգետնյա ջրերն (I հորիզոնի) ունեն տեղական թույլ ճնշում, մակարդակի տատանումները հասնում է 2,0-4,7մ: Գրունտային ջրերի բարձր մակարդակի պատճառով տարածաշրջանի առանձին տեղամասերը ճահճացած են և ջրավորված: Գրունտային ջրերի մակարդակն իջեցնելու նպատակով տարածաշրջանում ստեղծվել է "բաց" տեսակի ցամաքուրդային համակարգ՝ ջրանցքների և խողովակաշարերի միջոցով:

Մեր հետազոտվող տեղամասում գրունտային ջրերի մակարդակը գտնվում է 2,2-2,5մ խորությունների վրա:

7.Շրջանի սեյսմիկ բնութագիրը

Գրունտներն ըստ սեյսմիկ հատկանիշների համաձայն ՀՀՇՆ II -6.02.2006թ. III կատգի են: Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները "ներկայացված են" ջրածածկմամբ և ջրհեղեղմամբ, գրունտային ջրերի բարձր մակարդակով:

Ըստ սեյսմիկ հատկության տեղազննվող շրջանը գտնվում է III սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ, 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ:

8. Շրջանի տեկտոնական բնութագիրը

Շրջանը գտնվում է Արարատյան դաշտում Միջին Արաքսյան ճկվածքում և ներկայացված է հզոր միոցենային նստվածքներով:

9. Գրունտների գեոտեխնիկական հատկությունների ուսումնասիրությունների մասին

Կատարվել են հետևյալ աշխատանքների լաբորատոր ուսումնասիրությունները:

Ֆիզիկական հատկություններից որոշվել են բնական խոնավությունը, միներալային մասնիկների խտությունը, ծակուրկենությունը, ծավալային կշիռը, պլաստիկությունը և այլն:

Տվյալ արդյունքներով պարզ է դառնում, որ գրունտները կառույցների հիմքերի խորությունների վրա հիմնականում կավային են:

10. Տարածքի ինժեներա-երկրաբանական կառուցվածքը

Ըստ ֆոնդային նյութերի, տարածքի մանրամասն տեղազննման, լաբորատոր ուսումնասիրման և այդ տվյալներով պայմանավորված, նախկին տարիներին կատարված հետազոտությունների հիման վրա, պարզ է դառնում, որ տեղամասը բաղկացած է հետևյալ գրունտերից վերևից-ներքև: Երկրաբանաիթոլոգիական կտրվածքին մասնակցում հետևյալ երկու շերտերը:

№ 1 շերտ — Հողաբուսական շերտ

№ 2 շերտ — Դեղատ հաջորդող մոխրագույն և շագանակագույն կավ փափուկ պլաստիկ, մանր մոխրագույն ավազների նրբաշերտերով (3-10սմ): Շերտն ունի հատատարած բնույթ, հզորությունը 9,5մ (և ավելին է): Համանականից լճա-ալյուվիալ բիոգեն ծագման առաջացումներ:

11 Օբյեկտի տեխնիկա տնտեսական ցուցանիշներ

Հատանային նախագծի հարդարատեխնիկական գծագրերի նոր կառուցվող շենքը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով

Նոր կառուցվող մատուցչենքի կառուցման մակերեսը - 564.2 մ

Հարկայնությունը - 2 հանրակ նկատով

Տաղտաբներին, բոլոր 4 հատը մակերեսը - 56 մ

Ծանրությունը - 270 դմ

12. Շինհրապարակի էլեկտրամատակարարումը և ջրամատակարարումը

Կապալառուն պարտավոր է ապահովել իր միջոցներով շինհրապարակի ջրամատակարարումը և էլեկտրամատակարարումը, կազմակերպել շինհրապարակի և կառույցների լուսավորումը:

Շինարարության կենսապահովման ցանցերի տեղադրման աշխատանքները իրականացնել դպրոցի շենքի ցանցերից տեղադրելով համապատասխան հաշվիչներ էլեկտրաէներգիայի և ջրածախսի հաշվարկի համար (էլեկտրամատակարարում 50,5 կՎտ, ջրամատակարարում արտադրական և կենցաղային նպատակով 2,0 մ³/օր, կոյուղի 0.2 մ³/օր):

Արտադրությունում աշխատանքային տեղերի, ժամանակավոր շինությունների, ճանապարհների շինարարական տարածքների լուսավորման համար կազմված է էլեկտրաէներգիա սպառողների հզորության աղյուսակ:

Հաշվարկը կատարված է արտադրության աշխատանքների առավել ծանրաբեռնված ժամանակահատվածում, երբ ամենամեծ թվով մեքենաներ և մեխանիզմներ են աշխատում:

Վերահսկել և օպտիմալացնել էներգառեսուրսների ավտոմատացումը էներգակիրների հաշվառումը

Սպառողների պահանջվող էլեկտրաէներգիայի հզորությունների հաշվարկը

Սպառողների անվանումը	Չ/մ	Քանակը	Չ/մ տեսակարար հզորությունը ԿՎ	Պահանջարկի գործակիցը	Հզորության գործակիցը	Հաշվարկային հզորությունը ԿՎ
1	2	3	4	5	6	7
Ուժային հոսանքաընդունիչներ						
Եռակցող ապարատ	հատ	2. 0	20. 0	0. 35	0. 40	5. 60
Օդափաքացուցիչ	հատ	2. 0	1. 45	0. 70	0. 75	1. 52
Կոմպրեսոր	հատ	1. 0	22. 0	0. 70	0. 80	12. 32
Խորքային վիբրատոր	հատ	2. 0	1. 20	0. 70	0. 80	1. 34
Թրթռամուրճ	հատ	2. 0	2. 50	0. 70	0. 80	2. 80

13. Շինարարության տևողությունը

Շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է ըստ ՇՀսՈ 1.04.03-85 դրույթների համաձայն, կազմում է 180 օր: Աշխատանքների ժամկետները և հերթականությունը տրված են ներքո տրված ժամանակացույցում:

Շինարարության կապիտալ ներդրումները ըստ նորմեր՝ 1-ին ամիս 13,72%, 2-րդ ամիս 31,18%, 3-րդ ամիս 48,65%, 4-րդ ամիս 67,53%, 5-րդ ամիս 86,78%, 6-րդ ամիս 100%:

Շինարարության նորմատիվային տևողության հաշվարկի մեջ նկատի է առնված շինարարական աշխատանքների իրականացումը մեկ հերթափոխով, հարդարումն իրականացվում է զուգահեռ:

Օբյեկտի շինարարության աշխատատարությունը կազմում է 4536 մարդ/օր, աշխատողների միջին թվաքանակը 36 մարդ:

Շինարարության նորմատիվ ժամկետում հաշվի են առնված

- Նախապատրաստական շրջանի տևողությունը
- Նախագծվող օբյեկտի շինարարությունը
- Կոմպլեքսային փորձարկումներ և բանհրաժեշտ գործարկման և կարգաբերման աշխատանքներ:

Առանձին աշխատանքների կատարման տեղափոխման այլ ժամկետը, որը կապված է կոնկրետ արդյունաբերական պայմանների հետ, տեխնոլոգիական ընդմիջումների անհրաժեշտության դեպքում Կապալառուն պետք է կազմի աշխատանքների կատարման գրաֆիկ, համաձայնեցնի և հաստատի պատվիրատուի հետ:

Շինարարության պայմանագրի կնքելու ժամանակ Կապալառուն պետք է՝

- Կազմակերպի շինարարության ապահովումը նյութատեխնիկական ռեսուրսներով, բավարար ծավալներով և այն ժամկետներում, որոնք կապահովեն շինարարության տևողության պահպանումը, համաձայն պայմանագրի:

Հաշվի առնելով այն, որ դիրեկտիվ ժամկետը կազմում է 6 ամիս, որոշ աշխատանքների կատարման համար կիրառվել է բրիգադաների ավելացում, որը երևում է օրացուցային գրաֆիկում:

Անհրաժեշտ աշխատուժի հիմնավորումը շինարարությունում

Մասնագիտություն	Կարգը	Քանակը
Բետոնագործ	4	4
	3	2
Ամրանագործ	3	4
Զոդող	4	2
Առաստաղող (строповщик)	6	2
Տանիքագործ	5	3
	3	2
Հյուսն	9	2
Պատշար, քարտաշ	4	4
Հարդարող	5	4
	3	2
Էլ. մասնագետ	4	3
Օ.Ջ. մասնագետ	4	2
Կ.Ջ. մասնագետ	4	2
Բանվորներ		6
Տեխնիկական աշխատանքների ճարտարագետ (այդ թվում հակահրդեհային և աշխատանքի անվտանգության մասնագետ)		1
ԸՆԴԱՄԵՆԸ		45

14. Աշխատանքի կազմակերպում

Շին. հրապարակը նախատեսված է կազմակերպել Նոր Խարբերդ գյուղի մանկապարտեզի տարածքի կենտրոնական հատվածում:

Նախատեսված է տեղադրել ժամանակավոր ցանկապատ: Տարածքին մոտեցման ճանապարհները ասֆալտապատ են: Դեպի տարածք և դուրս նախատեսված են 2 մուտքեր և ելքեր: Գլխավոր մուտքը նախատեսված է փողոցի կողմից, իսկ մյուս մուտքը մանկապարտեզի տարածքին հարակից եզրային հատվածից: Շին.հրապարակի կազմակերպումից հետո սկսվում են ապամոնտաժման և քանդման աշխատանքները, միանգամից տարբեր կողմերով, երկու ճակատով:

Քանդման աշխատանքներին զուգահեռ կարելի է սկսել կառուցվող շենքի հողային աշխատանքները:

Նախագիծը մշակված է միաձույլ երկաթբետոնե կոնստրուկցիաներով, իսկ ամրանային իրերի պատրաստումը նախատեսված է կենտրոնացված պոլիգոններում: Երկաթբետոնե կոնստրուկցիաների բետոնացման նպատակով համապատասխան դասի ապրանքային բետոնը պատվիրվում է բետոնային հանգույցում: Բետոնը, շաղախը օբյեկտ են բերվում բետոնախառնիչ մեքենաներով և ավտոմոբիլային բետոնապոմպի օգնությամբ մղվում է կառուցվող շինություններ, միաժամանակ պարտադիր իրականացվում է բետոնի խտացում էլեկտրաթրթռիչի միջոցով: Խարամաբետոնե բլոկները օբյեկտ են բերվում փաթեթավորված, իսկ ցեմենտը, ավազը և գաջը պարկերով: Կից շինարարության կազմակերպման հատակագծում նշված են շինարարական մեքենա-մեխանիզմերի մոտեցման և բարձման-բեռնաթափման սխեմատիկ պատկերները:

Կապալառուն ապահովում է պատվիրատուի տեխնիկական հսկող կազմակերպությանը բետոնի մակնիշի ստուգումներ լաբորատոր պայմաններում:

Ներքին հարդարման աշխատանքները իրականացնել տանիքածածկային եւ ապակեպատման աշխատանքներից հետո: Ձմեռային պայմաններում հարդարման աշխատանքները կատարել ներսում 8^0C ոչ պակաս ջերմության պայմաններում:

Օբյեկտում շինարարության հակահրդեհային պաշտպանության կանոնների և պահանջների պատասխանատվությունը կրում է շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը: Հակահրդեհայի նպատակներով տեղադրված ինվենտարը պետք է լինեն գործող վիճակում եւ ազատ լինեն մոտեցման համար:

15. Շրջակա միջավայրի պահպանություն շինարարության ընթացքում

Շինարարություն իրականացվող տարածքներում շինմոնտաժային աշխատանքների կատարման ժամանակ պետք է պահպանվեն օդի փոշոտվածության և գազոտվածության կանխարգելման պահանջները: Այս նպատակով քարը և միջնորմային խարամաբետոնե բլոկները օբյեկտ են բերվում փաթեթավորված, իսկ ցեմենտը, ավազը, խարամը և գաջը պարկերով: Մեքենաները օբյեկտ պետք է մտնեն եւ դուրս գան մաքուր վիճակով, չախտոտելով ճանապարհները շինարարական աղբով:

Շինարարական հրապարակում գոյացած արտադրական ու կենցաղային աղբը պետք է մաքրվի և հեռացվի աղբավայր, ինչպես նաև շինարարությունում աշխատող բանվորների բնակության հետ կապված սանիտարական միջոցառումների իրականացում

16. Աշխատանքի պաշտպանություն

Բանվորների աշխատանքի պաշտպանությունը պետք է ապահովվի անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր

պաշտպանության միջոցառումների կատարումով, սանիտարակենցաղային հարմարություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան:

Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պետք է պահպանվեն շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվում հրահանգում:

Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

17. Աշխատանքների կատարման նախագիծ (ԱԿՆ)

Պատվիրատուի հետ պայմանագիր կնքելուց հետո Կապալառուն Պատվիրատուի հավանությանը և հաստատման է ներկայացնում համաձայն ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» պահանջների կազմված «Աշխատանքների կատարման նախագիծ» որում ներգրավում է ծրագրի իրականացման համար անհրաժեշտ աշխատանքների կատարման գրաֆիկը ըստ օրերի և պայմանագրով նախատեսված ժամկետների, սկսած մեկնարկման օրվանից մինչև ծրագրի լրիվ ավարտը և օբյեկտները շահագործման հանձնելու նախնական ակտի ստորագրումը:

Նշված գրաֆիկին Կապալառուն պետք է կցի նաև աշխատանքների կատարման ֆինանսավորման գրաֆիկ, այս դեպքում դրամական ցուցանիշներով՝ ըստ տասնօրյակների և նրանց վճարման փուլերի, համաձայն Պատվիրատուի կողմից սահմանված ձևերի և պայմանագրով ամրագրված կարգի:

Գրաֆիկների կատարման ընթացքը Պատվիրատուի կողմից քննարկվում է 15 օրը մեկ: Այդ ժամանակամիջոցում իրադրության ցանկացած փոփոխության մասին Կապալառուն պարտավոր է նախօրոք տեղեկացնել Պատվիրատուին, գրավոր:

Յուրաքանչյուր առաջին տասնօրյակում Կապալառուն պետք է հաշվետվություն ներկայացնի Պատվիրատուին նրա կողմից սահմանված ձևով, որն իր մեջ պետք է պարունակի՝

- Գրաֆիկների կատարումը ծավալային և դրամական ցուցանիշներով հաշվետու ժամանակահատվածում և աճողական:
- Գրաֆիկներից հետ մնալու դեպքում դրանց պատճառները, այդ թվում նաև՝ կախված պատվիրատուի գործունեության հետ:
- Կապալառուի կողմից նախատեսվող ռեալ միջոցառումները գրաֆիկում առաջացած ճեղքվածքը փակելու համար:
- Լուսանկարների պարկերմամբ աշխատանքների կատարման որակը և ընթացքը:

Պատվիրատուի կողմից հրավիրված խորհրդակցություններին կապալառուն պարտավոր է ճշտապահորեն մասնակցել:

18. Շինհրապարակի նախապատրաստում

Կապալառուն ինքն է ձեռք բերում իրավունք այն տարածքների համար, որոնց վրա պետք է կառուցվեն ժամանակավոր կառույցներ (գրասենյակ, պահեստ, արհեստանոց, և այլն):

Պատվիրատուն իրավունք ունի անարգել մուտք գործել ցանկացած ժամանակավոր կառույց և անհրաժեշտության դեպքում կատարել սրուգումներ:

Ժամանակավոր կառույցների շահագործումից և շինարարության ավարտից հետո Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին անհապաղ վերացնել ցանկացած ժամանակավոր կառույց (կամ բոլոր ժամանակավոր կառույցները) պատվիրատուի պահանջը:

Ժամանակավոր շինարարական տնտեսության շենքերի և շինությունների ցուցակ

Հ/հ	Անվանում	Քանակ	Չափսեր, մ	Ծախսվող Էներգ., կՎտ	Ծանոթագրություն
1	2	3	4	5	6
1	Ճարտարագիտա-տեխնիկական անձնակազմի գրասենյակ 3 աշխատողի համար	1.0	6.0x2.45	1,764	Շարժական տնակ
2	Հանդերձարան չորանոցով	1.0	6.0x2.45	1,764	Շարժական տնակ
3	Շարժական տնակ տնտեսական գույքի պահպանման համար	1.0	6.0x2.45	1,764	Շարժական տնակ
4	Սան. հանգույց լվացարանով	1.0	2.45x2.45	0,784	Շարժական սան. հանգ
5	Ճաշարան	1.0	6.0x2.45	1,764	Շարժական տնակ
6	Կենցաղային աղբարկղ	2.0	1.0x0.8		Մետաղական

19. Կլիմայական գործոնը

Իրականացվող շինարարական աշխատանքների վրա մթնոլորտային ազդեցությունները նվազագույնի հասցնելու նպատակով Կապալառուն պարտավոր է շինհրապարակում պատշաճ մակարդակով կազմակերպել մակերևույթային ջրերի հեռացում:

Կապալառուն պետք է կազմակերպի աշխատանքները այնպիսի հերթականությամբ ժամկետներում, որպեսզի հնարավոր չափով բացառվի մթնոլորտային տեղումների և (կամ ջերմաստիճանի) հետևանքով կատարված աշխատանքներին հասցված վնասները:

Կլիմայական անբարենպաստ պայմանները հիմք չեն կարող հանդիսանալ ծրագրի իրականացման համար նախատեսված տևողությունը և մրցույթային գինը վերանայելու:

Բացառիկ դեպքերում Պատվիրատուն իրավասու է սահմանված կարգով որոշում ընդունել աշխատանքների ժամանակավոր ընդհատման մասին, կապված աշխատանքների անհրաժեշտ որակի ապահովման անհնարինության հետ:

20. Անվտանգության պայմաններ

Կապալառուն պարտավոր է ապահովել շինհրապարակում գտնվող աշխատողների համար անհրաժեշտ սանիտարական և հիգիենիկ պայմաններ համաձայն ՀՀ օրենսդրության:

Կապալառուն իր միջոցներով պետք է կառուցի և սարքավորի ժամանակավոր հակահրդեհային կետեր, ինչպես նաև կազմակերպի հակահրդեհային պաշտպանության ծառայություն:

Կապալառուն տեղական ինքնակառավարման մարմինների համաձայնությամբ միջոցներով պետք է իրականացնի ժամանակավոր ցանկապատ, որը պետք է ընդգրկի շինարարական աշխատանքների իրականացման ամբողջ տարածքը: Այն պետք է բացառի այլ անձանց մուտքը շինհրապարակ:

Շինարարության ամբողջ ժամանակամիջոցում, մեկնարկի օրվանից մինչև նախնական ակտի ստորագրումը, Կապալառուն պատասխանատու է իրականացված աշխատանքների, շինարարական նյութերի, սարքերի ու սարքավորումների և այլ արժեքների պահպանության համար: Շինարարության նշված ժամանակամիջոցում տարբեր պատճառներով նրա կրած վնասը ծածկվում է սեփական միջոցների հաշվին, բացառությամբ պայմանագրով նախատեսված դեպքերի:

21. Օգտագործվող նյութերը և սարքերը

Շինարարության ընթացքում օգտագործվող բոլոր նյութերը և սարքերը պետք է համապատասխանեն ՀՀ տարածքում գործող նորմերին, ստանդարտներին՝ համապատասխան միջազգային ստանդարտների կիրառմամբ և ապահովեն աշխատանքների բարձր որակ: Մրցույթային հայտի նախահաշվում փվյալ ծրագրում օգտագործվող նյութերի և սարքերի վերաբերյալ գնային առաջարկներ ներկայացնելիս ճիշտ կողմնորոշվելու համար, Կապալառուն պետք է նախապես ծանոթանա տեխնիկական մասնագրերում և ցուցադրական նյութերում ներկայացված պահանջներին:

Շինարարության իրականացման համար պահանջվում են հետևյալ հիմնական նյութերը.

Անվանումը
Շաղախ M100
Բետոն B – 15
Բետոն B - 20
Բետոն B - 25
Ամրան A-I դասի
Ամրան A500C դասի

Մեքենաների և մեխանիզմների մոտավոր քանակը

Հ/հ	Մեքենաների և մեղանիզմների անվանումը	Մեքենաների մակնիշը և տիպը	Քանակ, հատ
1	2	3	4
1	Ավտոինքնաթափ	բեռնափվ. 25տ	4
2	Կողային ավտոմեքենա	բեռնափվ. 5տ	2
3	Ավտոբետոնախառնիչ	Տարողությունը 6մ³ КАМАЗ 54429	4
4	Ավտոբետոնամղիչ	АБС-6ДА	1
5	Կոմպրեսոր	Արտադ-ունը 10մ³/րոպե	2
6	Ավտոամբարձիչ բեռնափվ. 32տ	КАМАЗ КС - 557229	1
7	Ավտոամբարձիչ թրթուռավոր սլաք-22,5մ	МКГ -25	1
8	Ավտոամբարձիչ բեռնափվ. 5տ	КС-35715-2	2
9	Ավտոաշտարակ	АГП – 18.04	1
10	Ձեռքի պնևմատուփիչ	40կգ	4
11	Թռթռամուրճ ձեռքի	Makita	6
12	Ձողաքանոն թրթռացնող /Вибро рейка/	Вибро рейка	4
13	Էքսկավատոր	JSB – JS200W	1
14	Էքսկավատոր	CAT 428F	1
15	Խորքային վիբրատոր	ԻՎ	5
16	Եռակցող ապարատ	ТДМ-300С	4
17	Ձեռքի էլեկտրոգործիքներ	-	10
18	Հեփահար մուրճ	МО-10	2

Ծանոթություն՝

Պահանջվող մակնիշի բետոնի պատրաստումը նախատեսվում է կենտրոնացված բետոնախառնիչ հանգույցում, համալրված կշռային բաժնավորիչներով: Տվյալ հանգույցը գտնվում է շինհրապարակից դուրս:

22. Ստանդարտներ և նորմեր

Օգտագործվող բոլոր նյութերը և սարքավորումները պետք է համապատասխանեն Հայաստանում գործող նորմերին և ստանդարտներին, կամ դրանց համրժեք ստանդարտներին:

Կապալառուն պարտավոր է շինարարական բոլոր աշխատանքները կատարել համաձայն մրցույթային փաստաթղթերի՝ գծագրերի ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին որոնց համառոտ ցանկը բերվում է ներքևում:

Շինարարական արտադրություն

Շինարարական արտադրանքի արտադրություն և ընդունում

ՍՆիՊ 3.01.01-85 Շինարարական արտադրության կազմակերպում
ՍՆիՊ 3.01.01-84 Շինարարությունում գեոդեզիական աշխատանքներ
ՍՆիՊ III-4-80* Անվտանգության տեխնիկական շինարարությունում
ԳՕՍՏ 12.1.013-78 ԱԱՍՀ. Շինարարություն. Էլեկտրաանվտանգություն. Ընդհանուր պահանջներ
ԳՕՍՏ 12.3.016-87 ԱԱՍՀ. Շինարարություն. Հակակոռոզիոն աշխատանքներ. Անվտանգության պահանջներ
ՍՆիՊ III-0-75 Տարածքների բարեկարգում

Շենքերի և կառուցվածքների հիմնատակեր և հիմքեր

ՍՆիՊ 3.02.01-87 Հողային կառուցվածքներ. հիմնատակեր և հիմքեր

Հասարակական շենքեր և կառուցվածքներ

ՍՆիՊ 3.04.01-87 Մեկուսիչ և հարդարման պատվածքներ
ՍՆիՊ 3.05.01-85 Ներքին սանիտարատեխնիկական համակարգեր
ՍՆիՊ 3.04.04-85* Ջրամատակարարման և կոյուղու արտաքին ցանցեր և կառուցվածքներ
ՍՆիՊ 3.05.07-85 Ավտոմատացման համակարգեր
ՄՍՊ 4.02-101-98 Ջեռուցման համակարգերի խողովակաշարերի նախագծում և մոնտաժում մետաղապոլիմերային խողովակների օգնությամբ

Մետաղե կոնստրուկցիաներ

ՍՆիՊ III-18-75* Մետաղյա կոնստրուկցիաներ
ԳՕՍՏ 23119-78 Ֆերմաներ ծպեղային պողպատե եռակցված զույգանկյունակներից տարրերով արտադրական շենքի համար. Տեխնիկական պայմանների փոխարեն ԳՕՍՏ 24045-86
ԳՕՍՏ 24379.0-80 Հեղուսներ հիմքային. Ընդհանուր տեխնիկական պայմաններ
ԳՕՍՏ 25772-8 Պաշտպանակներ սանդուղքների, պատշգամբների և տանիքների պողպատե.
Ընդհանուր տեխնիկական պայմաններ
Շենքերի և կառուցվածքների կոնստրուկցիաներ
ՀՀՇՆ IV-13.01-96 Քարե և ամրանաքարե կոնստրուկցիաներ
Հանձնարարականներ Հայաստանի 9 բալ սեյսմիկությամբ ձմեռային պայմաններում տուֆաքարերից պատերի շարման վերաբերյալ
ՍՆիՊ 2.03.06-85 Ալյումինե կոնստրուկցիաներ
ԳՕՍՏ 21519-2003 Բլոկներ լուսամուտների ալյումինե ձուլվածքներից. տեխնիկական պայմաններ

ՍՆիՊ II-2381*	Պողպատե կոնստրուկցիաներ
ԳՕՍՏ 23747-88	Դռներ ալյումինե ձուլվածքներից. Ընդհանուր տեխնիկական պայմաններ
ԳՕՍՏ 30971-2002	Կարեր մոնտաժային պատերի բացվածքներին հարող լուսամուտների բլոկների հանգույցների. ընդհանուր տեխնիկական պայմաններ

Շինարարական նյութեր և շինվածքներ

Պատերի շարվածքի նյութեր

ՀՍՏ 100-95	Շինարարական քարեր փուֆերից, բազալտներից և տրավերտիններից. Տեխնիկական պայմաններ
ՀՍՏ 102-95	Միջնորմների համար սալեր թեթև բետոնից. տեխնիկական պայմաններ
ՀՍՏ 117-95	Պատաքարեր թեթև բետոնից. տեխնիկական պայմաններ
ԳՕՍՏ 4001-84	Որմնաքարեր լեռնային ապարներից. տեխնիկական պայմաններ
ԳՕՍՏ 6133-99	Պատաքարեր բետոնե. Տեխնիկական պայմաններ

Վերջնամշակման և երեսպատման նյութեր

ՀՍՏ 119-95	Ծածկասալեր բազալտից. տեխնիկական պայմաններ
ՀՍՏ 154-97	Պատերի երեսպատումը սալերով բնական քարից և դրա հիման վրանյութերից. տեխնիկական պայմաններ. փոխարեն ՌՄՆ 26-86
ԳՕՍՏ 6141-91	Սալիկներ կերամիկական ջնարակած՝ պատերի ներքին երեսպատման համար. տեխնիկական պայմաններ. Փոխարեն ԳՕՍՏ 6141-82

Բետոններ և շաղախներ

ԳՕՍՏ 10178-85	Պորտլանդցեմենտ և խարամապորտլանդցեմենտ. Տեխնիկական պայմաններ
ԳՕՍՏ 24640-91	Հավելանյութեր ցեմենտների համար. Դասակարգում
ՀՍՏ 177-98	Բնական ծակոտկեն լցիչներով բետոնների ամրության որոշում չքայքայող վերահսկողության մեթոդներով
ՀՍՏ 216-2001	Բետոնե թեթև կոնստրուկցիոն ջերմամեկուսիչ. Տեխնիկական պայմաններ
ԳՕՍՏ 5802-86	Շաղախներ շինարարական. փորձարկման մեթոդներ
ԳՕՍՏ 7473-94	Խառնուրդներ բետոնե. Տեխնիկական պայմաններ
ԳՕՍՏ 10060.0-95	Բետոններ. Սառնակայունության որոշման մեթոդներ. Ընդհանուր պահանջներ
ԳՕՍՏ 10180-90	Բետոններ. Ամրության որոշման մեթոդներ ըստ սրուգանմուշի
ԳՕՍՏ 10181-2000	Խառնուրդներ բետոնե.Փորձարկման մեթոդներ
ԳՕՍՏ 12730.0-78 - 12730.04-78 12730.5-84	Բետոններ. Ընդհանուր պահանջներ խտության,խոնավության ջրակլանման, ծակուրկենության և անջրանցիկության որոշման մեթոդներ
ԳՕՍՏ 22690-88	Բետոններ.Ամրության որոշումը չքայքայող վերահսկող

մեխանիկական մեթոդով

ԳՕՍՏ 22783-77	*Բետոններ. Սեղմման ամրության արագացված որոշման մեթոդ*
ԳՕՍՏ 23732-79	*Ջուր բետոնների և շաղախների համար. տեխ. ժայմաններ*
ԳՕՍՏ 24211-2003	*Հավելանյութեր բետոնների և շինարարական շաղախների համար. տեխ. պայմաններ*
ԳՕՍՏ 25328-82	*Ցեմենտ շինարարական շաղախների համար*
ԳՕՍՏ 25820-2000	*Բետոններ թեթև. տեխ. պայմաններ*
ԳՕՍՏ 26633-91	*Մանրահատիկ և ծանր բետոններ. տեխ. պայմաններ*
ԳՕՍՏ 27006-86	*Բետոններ. կազմի որոշման կանոններ*

Այլ փաստաթղթեր

Հանձնարականներ բնական լցանյութերով ապրանքային շաղախների և բետոնների խառնուրդների հատկությունների պահպանվածության ժամկետների երկարացման վերաբերյալ ՍԴԲ հավելանյութերի կիրառմամբ:

Հանձնարարականներ ՀՀ բնական ավազներով, շինարարական շաղախների,այդ թվում նաև քիմիական հավելանյութերով, կիրառման վերաբերյալ

Հրահանգ Հայաստանի ձմեռվա պայմաններում թերմոսի մեթոդով բետոնային և քարային աշխատանքներ կատարելիս բետոնային և շաղախային խառնուրդների էլեկտրատաքացման վերաբերյալ:

Լցանյութեր (Խիճ, կոպիճ և ավազ շինարարական աշխատանքների համար)

ԳՕՍՏ 8267-93	*Խիճ և կոպիճ լեռնային խիտ ապարներից շինարարական աշխատանքների համար*
ԳՕՍՏ 8736-93	*Ավազ շինարարական աշխատանքների համար. տեխ.պայմաններ*

Ջերմամեկուսիչ նյութեր

ՀՍՏ 206-2000	*Սալեր ջերմամեկուսիչ պեռլիտաթելքավոր. տեխնիկական պայմաններ*
ՀՍՏ 207-2000	*Շինվածքներ ջերմամեկուսիչ փրփրաքարային. տեխնիկական պայմաններ*
ԳՕՍՏ 16136-2003	*Սալեր պեռլիտաբիտումի ջերմամեկուսիչ. տեխնիկական պայմաններ*
ԳՕՍՏ 25880-83	*Նյութեր և շինվածքներ շինարարական փաթեթավորում, մշակում, փոխադրում և պահում*
ԳՕՍՏ 2889-80	*Մածիկ տանիքածածկի բիտումային տաք. տեխնիկական պայմանների փոխարեն ԳՕՍՏ 2889-67*
ԳՕՍՏ 10923-23	*Ռուբերոիդ. տեխնիկական պայմաններ. Փոխարեն ԳՕՍՏ 10923-83*
ԳՕՍՏ 14791-79	*Մածիկ շինարարական հերմետիկացնող չպնդացնող. տեխ. պայմաններ. փոխարեն ԳՕՍՏ 5.2129-73, ԳՕՍՏ 14791-69*
ԳՕՍՏ 30547-97	*Նյութեր գլանափաթեթավոր, տանիքածածկի և հիդրոմեկուսիչ. Ընդհանուր տեխնիկական պայմաններ փոխարեն ԳՕՍՏ 2551-75, ԳՕՍՏ 23835-79, ԳՕՍՏ 26627-85, ԳՕՍՏ 4.203-79*

24. Աշխատանքների երաշխիքը

Կապալառուն պարտավոր է իր հաշվին վերացնել այն թերությունները որոնք ի հայտ կգան պայմանագրում նշված երաշխիքային ժամկետներում կառույցների շահագործման ընթացքում (աշխատանքների ցանկը և երաշխիքային ժամկետները որոշում է Պատվիրատուն, որոնք զետեղվում են պայմանագրում):

Երաշխիքային ժամանակամիջոցում հայտնաբերված թերությունների մասին Պատվիրատուի և Կապալառուի կողմից կազմվում է համապատասխան երկկողմանի ակտ, որում նշվում են թերությունները, նրանց չափերն ու ծավալները, վերացման ժամկետները:

Կազմեց *Լ. Զզմեջյան*

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՂՐԵՐԻ ՊԱՀԱՆՋԻ ԳՐԱՖԻԿ

N ՀՀ	ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ	Չ/Մ	ՔԱՆԱԿ	Ա Մ Ի Ս Ն Ե Ր					
				1	2	3	4	5	6
1	ԳԼԽԱՎՈՐ ԿԱՊԱԼԱՈՒ 80%	ՄԱՐԴ	28						
2	ԵՆԹԱԿԱՊԱԼԱՈՒ 20%	ՄԱՐԴ	8						
	ԸՆԴԱՄԵՆԸ	ՄԱՐԴ	36						
	ԱՅՂ ԹՎՈՒՄ								
3	ԲԱՆՎՈՐ 86.11%	ՄԱՐԴ	31						
4	ԻՆԺԵՆԵՐԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ8.33%	ՄԱՐԴ	3						
5	ՇԱՐԱՅՈՂ 2.78%	ՄԱՐԴ	1						
6	ՊԱՀԱԿԱՅԻՆ ՇԱՐԱՅՈՒԹՅՈՒՆ 2.78%	ՄԱՐԴ	1						
7	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿԸ	ՄԱՐԴ	45						
8	ԱՇԽԱՏԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴ ՕՐ	ՄԱՐԴ	4536						

Rմիջ=36ՄԱՐԴ



«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
«__» _____ 20 թ.

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ՇԱՐԺՄԱՆ ԳՐԱՖԻԿ

Մասիս համայնքի մանկապարտեզների կառուցում, հիմնանորոգում և բարեկարգում		Պատվեր «ԱՄՄՀ-ԳՀՇՁԲ-22/24-1»	
Հասցե՝ բ. Մասիսի գ.Նոր Խարբերդում մանկապարտեզի կառուցում	Փուլ	Թերթ	Թերթեր

ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԳՐԱՖԻԿ



«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
«___»_____20 Թ.

ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:500



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1. ՊԱՀԱԿԱԿԵՏ
2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՐԱԾՔ
3. ՀԱՆԴԵՐՁԱՐԱՆ
4. ՄՈՒՏՔԻ ԸՆԴՈՒՆԱՄԱՆ ԿԵՏ
5. ՄԱՆՐԱՆԱԳՈՒՅՑ
6. ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ
7. ՇԻՆՅԱԻՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՊԱՀԵՍՏ
8. ՇԻՆՅԱԻՈՒԹՅԱՆ ՓԱԿ ՊԱՀԵՍՏ

ԿԱՌՈՒՑՎՈՂ ՄԱՍՆԱՇԵՆՔ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏԵՂԱԴՐՎՈՂ ՄԵԾԱՄԱՍ ՎԱՀԱՆԱՅԻՆ ՊԱՏՆԵՇ



1.ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԸ ԳՈՏԵՎՈՐՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԵԾԱՄԱՍ ՎԱՀԱՆԱԿԱՅԻՆ ՊԱՏՆԵՇԻ ԱՐՏԱՔԻՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԵՎԱՑՈՂ ՎԱՅՐՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՓԱԿՑՆԵԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՍՏԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՄԱՍԻՄԻ ԱՎԱԳԱՆՅԻ ՈՐՈՇՄԱՆ

2.ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՀՍԿՈՒՄԸ

-ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱՐՁՐ ՈՐԱԿԸ ՈՒ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԱՊՀԱՎՈՒՄ Է ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՍԿՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

-ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՍԿՈՒՄԸ ՆԵՐԱԾՈՒՄ Է

ա/ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ, ՇԻՆՎԱԾՔՆԵՐԻ, ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՈՒՏՔԱՅԻՆ ՀՍԿՈՒՄԸ

բ/ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԳԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՒՏԱՅԻՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ՕԳԵՐԱՑՄԱՆ ՀՍԿՈՒՄԸ

գ/ ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀՍԿՈՒՄԸ

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՀԱՄՄԱՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳԻՐ

Nn/n	Անվանում	Տարկիր	Քանակ
1	Թրթռահավոր կոտրիչ	ՄԿՏ-25	1
2	Ինքնաթափ ավտոմեքենի	ՄԱՅ 5516	2
3	Ինքնաթափ ավտոմեքենի	KAMA3 55111	2
4	էլ. եռակցման սարք	ՏԴՄ-300C	2
5	Բեռնիչամեքենի	ԱԵՀ-6 ԴԱ	1
6	Ավտոաշտարակ	ԱՇՏ-18.04	1
7	Բեռնաձեռնամեքենի	KAMA3 55111	4
8	Ավտոամբարձիչ	КС-35715-2	2
9	Ավտոամբարձիչ	КС-557229	1
10	Էքսկավատոր	JSB -JS200W	1
11	Էքսկավատոր	CAT 428 F	1

ՌՄԿ-25 ԹՐԹՈՒՐՎՈՂ ԿՈՄԻՆԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ԹՈՒՅԼԻ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ - 5.0 - 20.0 մ
ԹՈՒՅԼԻ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԸ - 3.0 - 20.0 մ
ԲԵՌՆԱԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԸ - 5.0 - 25.0 տ

ԲԵՌՆԱՄԱՐԻՉ — ԱԵՀ-6 ԴԱ

ԷՔՍԿԱՎԱՏՈՐ — JSB -JS200W

ԷՔՍԿԱՎԱՏՈՐ — CAT 428 F


ԲԵՏՈՆԵ ԽԱՌՆԻՉ — KAMA3-54429


Ավտոինքնաթափ — 65115


ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԿՈՒՐԱԿ — КС-35715-2


ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԿՈՒՐԱԿ — KAMA3 КС-557229


ԱՎՏՈԱՇՏԱՐԱԿ — ԱՇՏ-18.04

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՐԻՍՊ
ՑԱԾՐ ԼԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴԱԼԱՐ
ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՋՐԱԳԻԾ
ժջ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՋՐԱԳԻԾ
ՋԳՀ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՋՐԱԳԾԻ ԴԻՏԱՑՈՒՐ
ԿԳՀ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՅՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՑՈՒՐ
ժկ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿՈՅՈՒԹՅԱՆ ԽՈՂՈՎԱԿ

ՀԱԿԱԼՈՊԵՉԱՅԻՆ ՀԻԴՐԱՆՏ
ԼՈՒՍԱՐՁԱԿ
ՋՐԻ ԾՈՐԱԿ
ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՇԻՆ. ՀՐԱՊԱՐԱԿ
ՍՊԱՅԻ ՏԱՐԱՆԵՐ

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
«___»_____20 թ.

Մասիս համայնքի մանկապարտեզների կառուցում, հիմնանորոգում և բարեկարգում				Պատվեր «ԱՄՄՀ-ԳՀՇՁԲ-22/24-1»		
Հասցե՝ ք. Մասիսի գ.Նոր Խարբերդում մանկապարտեզի կառուցում				Փուլ	Թերթ	Թերթեր
			Շինարարության կազմակերպման նախագիծ (ՇԿՆ)	ԱՆ	ՇԿՆ - 4	5
ԿԱՏԱՐՈՂ	Հ.Հարությունյան					

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՍՕՐՅԱԿՆԵՐ																	
		10	20	30	40	50	60	70	80	90	100	110	120	130	140	150	160	170	180
1	ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ																		
2	ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՔԱՆԴՈՒՄ																		
3	ՆՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ																		
4	ՆԵՐՔԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ																		
5	ԷԼ.ՈՒԺԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ																		
6	ՀՈԴԵՀԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆՈՒՄ ԵՎ ՏԵՍԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ																		
7	ՍԵՊՏԻԿ ՀՈՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ																		
8	ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎԿՈՅՈՒՂՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ																		
9	ԱՐՏԱՔԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ																		
10	ՋՐՈՒՑԱՏԱՂԱԿԱՐՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ																		
11	ՄԵՏԱՂԱԿԻՆ ՑԱՆԿԱՊԱՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ																		

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
«___»_____20 Թ.

ՇԻՆ.ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ Է ՇԿՆ-ՈՎ, ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՊՐԱՆՔՈՎՈՒՄ Է 36 ԱՄԱՍ ԱՇԽԱՏԵԼ

Մասիս համայնքի մանկապարտեզների կառուցում, հիմնանորոգում և բարեկարգում	Պատվեր «ԱՄՄՀ-ԳՀՄՔԲ-22/24-1»		
Հասցե՝ ք. Մասիսի գ.Նոր Խարբերդում մանկապարտեզի կառուցում	Փուլ	Թերթ	Թերթեր
	Ա	ՇԿՆ-5	5